

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2006 թվականին

- **Ժողովրդագրական իրավիճակ**

ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ, ընթացիկ հաշվառմամբ, կազմել է 3222.9 հազ. մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 2065.9 և գյուղականը՝ 1157.0 հազ. մարդ: 2007թ. տարեսկզբի դրությամբ այս ցուցանիշը 2006թ. տարեսկզբի համեմատությամբ աճել է 3.7 հազ. մարդով, իսկ 2005թ. հունվարի 1-ի համեմատությամբ՝ 7.1 հազ. մարդով, արձանագրելով տարեկան 0.1%-ի աճ: Հավելածի 77%-ն արձանագրվել է գյուղական բնակչության թվաքանակի ցուցանիշում:

2006թ. ՀՀ մշտական բնակչության թվաքանակի աճն ապահովվել է բնակչության բնական հավելածի հաշվին, որը թեև 2005թ. նկատմամբ նվազել է 6.3%-ով, սակայն, 10.1%-ով նվազել է միգրացիայի մնացորդի ցուցանիշը:

- **Համախառն ներքին արդյունքի ցուցանիշ (ՀՆԱ)**

ՀՆԱ-ի արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2006թ. կազմել է 2657130.7 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2005թ. համեմատ կազմել է 113.3%՝ 2005թ. 113.9% նույն ցուցանիշի դիմաց: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2006թ.-ին կազմել է 824940 դրամ (1983 ԱՄՆ դոլար կամ 1583 եվրո):

- **Արդյունաբերություն**

Հանրապետությունում 2006թ., ընթացիկ գներով, թողարկվել է 644862.5 մլն. դրամի, իրացվել 658366.4 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, որից ԱՊՀ երկրներում՝ 57170.0 և այլ երկրներում՝ 174140.0 մլն. դրամի արտադրանք: 2005թ.-ի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 99.1%:

2006թ.-ին 2005թ.-ի համեմատ ՀՀ 5 մարզերի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրվել է արդյունաբերական արտադրության աճ (ք.Երևանում՝ 2.6%, ՀՀ Տավուշի մարզում՝ 8.8%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 7.6%, ՀՀ Արարատի մարզում՝ 7.1% և ՀՀ Շիրակի մարզում՝ 4.1%): Հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 44.6%-ը բաժին է ընկել Երևան քաղաքի արդյունաբերական կազմակերպություններին:

- **Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2006թ., ընթացիկ գներով, կազմել է 555.9 մլրդ. դրամ՝ 2005թ.-ի մակարդակը գերազանցելով 0.4%-ով: Անասնաբուծության համախառն արտադրանքը կազմել է 199683.1 մլն. դրամ և 2005թ.-ի մակարդակը գերազանցել 10.4 %-ով, իսկ բուսաբուծությունում՝ 356239.2 մլն. դրամ և 2005թ.-ի մակարդակը զիջել 4.4%-ով:

Բուսաբուծության համախառն արտադրանքի նվազումը պայմանավորված է հացահատիկային և հատիկաբերող բերքի մշակաբույսերի (46.4%), պտղի և հատապտղի (9.3%), կարտոֆիլի (4.4%) և կերային մշակաբույսերի (20.8%) համախառն բերքի ծավալների անկմամբ: Միաժամանակ, ավելացել են բանջարանոցային և բոստանային մշակաբույսերի, ինչպես նաև խաղողի արտադրության ծավալները (խաղողինը՝ 22.5%, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 17.5%, բոստանային մշակաբույսերինը՝ 14.5%): Անասնաբուծական հիմնական մթերքի արտադրության ծավալները, բացառությամբ ձվի ծավալից, նույնպես ավելացել են (սպանդի համար իրացված անասնի և թռչնի ծավալը գերազանցել է 2005թ.-ի մակարդակը 18.2%-ով, կաթինը՝ 4.3%-ով):

- **Չկնորություն, ձկնարածություն**

Հանրապետությունում 2006թ.-ին իրականացվել է 2467.9 մլն. դրամի ձկան որս, որը գերազանցել է 2005թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 831.2 մլն. դրամով կամ 50.8%-ով (համադրելի գներով):

- **Շինարարություն**

Բնակարանային շինարարություն: 2006թ.-ին հանրապետությունում պետական բյուջեի, մարդասիրական օգնության, կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 385735 քառ.մ ընդհանուր մակերեսով 891 նոր բնակելի շենք կամ 2005թ.-ին գործարկված մակերեսի 109.2%-ը:

Իրականացված շինարարության ծավալ: 2006թ.-ին հանրապետությունում իրականացվել է 643827.8 մլն.դրամի շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 264953.4 մլն. դրամի: Շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 574916.2 մլն.դրամ, որոնցից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 208456.9 մլն. դրամ:

Հիմնական միջոցների գործարկում: 2006թ.-ին գործարկվել են 470879.7 մլն. դրամի հիմնական միջոցներ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 157663.6-ի:

- **Տրանսպորտ**

Բեռնափոխադրումներ: 2006թ.-ին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2005թ.-ի նկատմամբ աճել է 16.6%-ով:

Ուղևորափոխադրումներ: 2006թ.-ին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2005թ. ցուցանիշի նկատմամբ աճել է 12.7%-ով:

Բեռնաշրջանառություն: 2006թ.-ին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2005թ.-ի նկատմամբ աճել է 1.9%-ով:

Ուղևորաշրջանառություն: 2006թ.-ին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2005թ.-ի նկատմամբ աճել է 2.2%-ով:

- **Կապ**

2006թ.-ին բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած կապի ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 126158.6. մլն.դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), որը 2005թ.-ի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 36.9%-ով:

- **Առևտուր և այլ ծառայություններ**

Մանրածախ առևտուր: 2006թ.-ին մանրածախ առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 820816.7 մլն. դրամ, որը 2005թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 10.5%-ով: 2006թ.-ին ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում և սպառողական ապրանքների շուկաներում իրականացվող առևտուրը՝ 79.8% (655278.7 մլն.դրամ): Այս միտումը բնորոշ է հանրապետության գրեթե բոլոր մարզերին:

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության 86.0%-ը (706078.4 մլն.դրամ) ապահովել են ք.Երևանի մանրածախ առևտրի օբյեկտները: 2006թ.-ին մանրածախ առևտրի շրջանառության 46.5%-ը (382237.1 մլն.դրամ) ձևավորվել է խանութների միջոցով: Հանրապետությունում խանութների 43.6%-ը մասնագիտացված է պարենային ապրանքների, 44.3%-ը՝ ոչ պարենային և 12.1 %-ը՝ խառն ապրանքների վաճառքով:

2006թ.-ին պահպանվել է 2005թ.-ին արձանագրված ք.Երևանի մանրածախ առևտրի գերակայության միտումը ՀՀ մյուս մարզերի նկատմամբ: Այսպես. ք.Երևանի մանրածախ առևտրի շրջանառությունը 2006թ.-ին 2.5 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի մանրածախ շուկայի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 12.7 – 34.0% միջակայքում:

Ծառայություններ:

2006թ.-ին ծառայությունների ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 452541.0 մլն.դրամ, որը 2005թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 20.7%-ով:

2006թ.-ին ծառայությունների ոլորտում առկա է ք.Երևանի գերակայությունը: Ըստ ծառայությունների տեսակների, մարզերի տեսակարար կշիռը տատանվել է 0.3-27.9%-ի սահմաններում:

2006թ.-ին ծառայությունների ընդհանուր ծավալի 87.1%-ը բաժին է ընկել ք. Երևանին և մնացած 12.9% մյուս մարզերին:

2006թ.-ին ծառայությունների ոլորտում, ք. Երևանի գերակայությունը պահպանվել է նաև միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալի առումով: Այսպես, ք.Երևանի ծառայությունների շուկայի ծավալը 2006թ.-ին 2.5 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 13.6-26.8%-ի միջակայքում:

• ***Սպառողական գներ***

2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի նկատմամբ հանրապետության սպառողական շուկայում արձանագրվել է 5.2% գնաճ՝ 2005թ.-ի համապատասխան ցուցանիշի 0.2% գնանկման դիմաց: 2006թ.-ին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.4%, 2005թ.-ի նույն ցուցանիշի 0.05% գնանկման դիմաց:

• ***Չբաղվածություն***

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը 2006թ.-ին հանրապետությունում, կազմել է 1181.3 հազ. մարդ, որոնց 92.5%-ը կամ 1092.4 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 7.5%-ը կամ 88.9 հազ. մարդ չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2006թ.-ին կազմել են 1735926.9 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 1664360.0 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2005թ.-ի համեմատ, համապատասխանաբար, կազմել են 119.2 և 118.3%:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2006թ.-ին 2005թ.-ի նկատմամբ աճել են 15.4%-ով:

• ***Արտաքին առևտուր***

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2006թ.-ին, ընթացիկ գներով, կազմել է 1304544.8 մլն. դրամ կամ 3176.7 մլն. ԱՄՆ դոլար, այդ թվում ապրանքների արտահանումը՝ 404779.0 մլն. դրամ (ՖՕԲ գնով) կամ 985.1 մլն. դոլար և ներմուծումը՝ 899765.8 մլն. դրամ (ՄԻՖ գնով) կամ 2191.6 մլն. դոլար:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է 494986.8 մլն.դրամով (1206.5 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնությամբ ստացված բեռների՝ 472985.4 մլն. դրամով (1136.8 մլն. դոլարով): Ըստ նախնական տվյալների, 2006թ.-ին արտաքին առևտրի հաշվեկշիռը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով) կազմել է 1152.9 մլն. դոլար: